<<ՁԻ & ԷԼ ԻՆՎԵՍՏ>> ՍՊԸ

Տարեկան ֆինանսական վերլուծություն 2021թ.

2021թ. Ընկերության ռազմավարությունն նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի ապահովումը: 2021թ.-ի ընթացքում մակրոտնտեսական միջավայրը ձևավորվել է հետ պատերազմյան ժամանակաշրջանի և համավարակի ալիքի տարածման ազդեցությամբ:Կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման դրույքը տարեվերջին կազմել է 7.75%(աճել է տարեսկզբի համեմատությամբ 2.2%-ով): Լոմբարդային ռեպոն կազմել է 9.25% , դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը `6.25%: 2021թ.-ի երկրորդ կիսամյակից հետո դիտվել է պետական պարտատոմսերի եկամտաբերության, ինչպես նաև շուկայական տոկոսադրույքների աճ, սակայն փոխարժեքի ոչ կայուն մակարդակի պայմաններում ընկերությունը չի ընդլայնել հաճախորդների շրջանակը: 2022թ.-ի ընթացքում ընկերությունը նախատեսում է ընդլայնել իր գործունեությունը ներգրավելով ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ իրավաբանական անձանց և կազմակերպությունների: Գնահատելով 2021թ.-ի գործնեության արդյունքերը ընկերությունը կատարել է նախորդ տարվա գործարար ծրագրով նախատեսած ցուցանիշներնը բավարար չափով: Ընկերությունը նախատեսում է սահմանված ցուցանիշները ապահովելու համար 2022թ.-ին ակտիվ աշխատել արժեթղթերի շուկայում՝ ներգրավելով հաճախորդների ավելի մեծ շրջանակ և իրենց միջոցները տեղաբաշխել ՀՀ պետական պարտատոմսերում:

ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները

ՀՀ ֆինանսական ցուցանիշները 2021թ.-ի ընթացքում ունեցել են բավարար ազդեցություն ընկերության գործնեության արդյունքների վրա: Ընկերությունը 2021թ.-ի ընթացքում իր անունից և իր համար ձեռք չի բերել պետական պարտատոմսեր: Հաշվետու տարվա երկրորդ կիսամյակից հետո արժեթղթերի շուկայում պետական պարտատոմսերի տոկոսադրույքների բարձրացումը հանգեցրեց ընկերության իրական արժեքով վերաչափվող ակտիվների ընդհանուր արժեքի նվազմանը, ինչի արդյունքում տարեվերջին ընկերության կանոնադրական

կապիտալը նվազեցվեց շուրջ 5 մլն դրամի չափով: Նույն թվականին ընկերությունը իր կանոնադրական կապիտալը ավելացրեց շուրջ 10%-ով `15 մլն. դրամի չափով, հույս ունենալով հետագայում ընդլայնելու ընկերության կանոնադրական կապիտալի չափը: Ընկերության ընդհանուր ակտիվները նախորդ ժամանակաշրջանի համեմատ պակասել է 4.974.000 դրամի չափով կազելով 103.908.000 դրամ: Նույն պատկերն ունենք նաև ընդհանուր պարտավորությունների մեջ նախորդ ժամանակաշրջանի համեմատ ընկերության պարտավորությունները նվազել են 11.105.000 դրամի չափով՝ կազմելով 35.299.000 դրամ: Ինչպես նշված էր վերոգրյալում ընկերությունը ավելացրել է իր կանոնադրական կապիտալի չափը ,ուստի ընկերության ընդհանուր կապիտալը ևս ենթարկվել է փոփոխության՝ նախորդ ժամանակահատվածի 62478000 դրամի փոխարեն կազմելով 68609000 դրամ:

Ներքին աուդիտի ղեկավար Ժ.Մկրտչյան